

ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԵՎ ԱՐՏԱՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԸ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՒՄ¹

Հայկ Բաղդասարյան

ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասպիրանտ

Պայմանագրային և արտապայմանագրային պատասխանատվության հարաբերակցությունը պարտավորական իրավունքի ամենաբարդ և նուրբ հավասարակշռություն պահանջող հարցերից է²: Նման տարանջատման ոչ միանշանակությունը պայմանավորված է ինչպես իրավունքի զարգացման պատմական պայմաններով, այնպես էլ իրավական տարբեր համակարգերի և պետությունների որդեգրած առանձին մոտեցումներով:

Պայմանագրային և արտապայմանագրային պարտավորությունների դասակարգումը կատարվել է դեռևս հռոմեական իրավունքում Գայի կողմից³: Եվ չնայած ինստիտուտի պատմաիրավական հարուստ անցյալին՝ պայմանագրային և արտապայմանագրային պատասխանատվության հարաբերակցության, դրանց յուրաքանչյուրի բովանդակության, ծավալի վերաբերյալ հարցերը շարունակում են մինչ օրս մնալ ուսումնասիրության առարկա:

19-րդ դարի վերջին, 20-րդ դարի սկզբին արդյունաբերական արտադրության անցումը վերաիմաստավորում է քաղաքացիական պատասխանատվության գաղափարը, ինչն իր հերթին հանգեցնում է պայմանագրային և արտապայմանագրային պատասխանատվության հարաբերակցության առավել լայն դիսկուրսի:

Մեքենայացված տնտեսության պայմաններում դժբախտ պատահարների, մարմնական վնասվածքների կամ մահվան դեպքում վնասների հատուցման դեֆիկտային առավել խիստ պատասխանատվություն սահմանելու անհրաժեշտությունը դառնում է օրակարգային: Մինևույն ժամանակ շրջանառվում է այն գաղափարը, որ արտադրության գործընթացում դժբախտ պատահարների դեպքում գործատուի խիստ պատասխանատվությունը կարող է հիմնվել նաև վերջինիս՝ աշխատողի անվտանգության ապահովման պայմանագրային պարտավորությունների չկատարման վրա:

Պայմանագրային և դեֆիկտային պատասխանատվության շրջանակների ընդլայնումը հանգեցնում է պայմանագրային և արտապայմանագրային պատասխանատվության մրցակցության և պայմանագրային հարաբերությունների նկատմամբ արտապայմանագրային պատասխանատվության կիրառման հավակնությունների: Նշված հակադրության արդյունքում քաղաքացիական իրավունքում ձևավորվում են երկակիության (*Duality*) և միասնության (*Unity*) տեսությունները:

¹ Սույն հոդվածը գեկուցվել է 2022թ. դեկտեմբերի 8-ի ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների գիտական նստաշրջանին:

² Տե՛ս **P. Wery**, *Droit des obligations*, 2nd edn, Bruxelles, Larcier, 2011թ., էջ 619:

³ *Omnis enim obligatio vel ex contractu nascitur vel ex delicto* — Ցանկացած պարտավորություն ծագում է կամ պայմանագրից, կա՛մ դեֆիկտից: Տե՛ս **Гай**, *Институции*. Кн. 3, п. 88: Пер. с латинского **Ф. Дадынского**, Под ред. **В.А. Савельева, Л.Л. Кофанова.**, М.: Юрист, 1997թ., էջ 205:

Հեղինակների մի մասը, ինչպես օրինակ՝ Լաբբեն¹, հարում էր երկակիության տեսությանը՝ հանդես գալով պայմանագրի հիման վրա գործատուի համար խիստ պատասխանատվություն սահմանելու և պայմանագրային հարաբերություններում դելիկտային կարգավորումների վրա հենվելու անթույլատրելիության օգտին: Հեղինակի գնահատմամբ պայմանագիրը ենթադրում է պոզիտիվ և հատուկ պարտավորություններ և ոչ ընդհանուր բնույթի պարտականություններ, ինչպես արտապայմանագրային պարտավորությունների պարագայում: Վերջինս նշում է, որ պատասխանատվության աստիճանի և վաղեմության ժամկետների մասով պոզիտիվ իրավունքը պայմանագրային և արտապայմանագրային պատասխանատվության համար նախատեսում է տարբեր կարգավորումներ:

Ի հակադրություն նշվածի՝ Լեֆեբլը² պայմանագրային պատասխանատվությունը բնորոշում է որպես «կիսատ, թերի արտահայտություն, բառերի հավաքական սխալմունք» և գտնում է, որ ամբողջ պատասխանատվությունը հիմնված է դելիկտային մեղքի վրա, իսկ պայմանագրային պատասխանատվության դեպքում այն ծագում է պայմանագրի կողմերի սահմանած «կանոնների» խախտման արդյունքում:

Պրանդոուլինը գտնում է, որ «գոյություն ունի ոչ թե պատասխանատվության երկակիություն, այլ միասնություն, իսկ պատասխանատվությունը միայն դելիկտային է»³: Վերջինս նշված փաստարկը, ի թվս այլնի, հիմնավորում էր նրանով, որ սկզբնական պայմանագրային պարտավորությունները չկատարելու դեպքում (*les obligations primitives*) դրանք դադարում են, և դրանց փոխարեն օրենքը սահմանում է վնասները հատուցելու պարտավորություն: Պարտավորական իրավունքի խախտումը քաղաքացիական իրավախախտում է (դելիկտ), այնպես, ինչպես սեփականության իրավունքի խախտումը:

Պայմանագրային և արտապայմանագրային պատասխանատվության կիրառման շրջանակների ընդլայնման ֆոնին, ինչպես նաև նոր՝ այսպես կոչված հիբրիդային պատասխանատվության տեսակների ի հայտ գալուն զուհահեռ (մասնագիտական պատասխանատվություն, ապրանքների և ծառայությունների թերություններով պատճառված վնասների համար պատասխանատվության և այլն, որոնք հատում են պայմանագրային և արտապայմանագրային պատասխանատվության կիրառման ստանդարտ սահմանը) շարունակաբար արմատավորվում է քաղաքացիական պատասխանատվության մեկ միասնական գործառույթի ընկալումը:

1982թ. պատասխանատվության պայմանների վերաբերյալ աշխատության մեջ Վինեյը⁴ նշում է, որ անօգուտ է և ինչ-որ տեղ նաև վնասակար է պատասխանատվության վերաբերյալ բոլոր հնարավոր օրինակները փորձել վերագրել ընդամենը երկու կատեգորիաների՝ պայմանագրային և արտապայմանագրային պատասխանատվությանը: Եվ որպեսզի հնարավոր լինի խուսափել օրենքով նախատեսված ռեժիմների չափազանց շատ բաղդատումից, կարևոր է որքան հնարավոր է աջակցել առավել համընդհանուր և ունիտար իրավական կատեգորիային՝ նվազագույնի հասցնելով պայմանագրային և արտապայմանագրային պատասխանատվության միջև առկա սկզբունքային տարբերությունները և նախատեսել նշված ընդհանուր իրավական ռեժիմը շրջանցելու հնարավորության արգելք, բացառությամբ՝ երբ դա պայմանավորված է իրավիճակի կամ գործուներության հա-

¹ Տե՛ս **J-É Labbé**, Notes in Sirey: note to Luxembourg 27 November 1884թ., Bruxelles 24 April 1885թ., Bruxelles, 28 April 1885թ., էջեր 4, 25:

² Տե՛ս **A-F Lefebvre**, De la responsabilité délictuelle, contractuelle-responsabilité du patron envers l'ouvrier, RCLJ, 1886 թ., էջ 485-487:

³ Տե՛ս **J Grandmoulin**, De l'unité de responsabilité, Thesis, Rennes, 1882 թ., էջեր 2-3:

⁴ Տե՛ս **G Viney**, Les obligations, La responsabilité: conditions, 1st edn, Paris, LGDJ, 1982 թ., էջեր 299-300:

տուկ բնույթով:

Որոշ հեղինակներ էլ, հանդես գալով մեկ միասնական քաղաքացիական պատասխանատվության իրավական ռեժիմի օգտին, ընդգծում են, որ պայմանագրային և արտապայմանագրային պատասխանատվության իրավական տարբեր ռեժիմների բաժանումը պայմանավորված է բացառապես պատմական պատճառներով՝ հռոմեական իրավունքից փոխառված պարտավորական իրավունքի բաժանման օրինակով¹:

Պայմանագրային և արտապայմանագրային պատասխանատվության հարաբերակցությանը, դրանց տեսական և գործնական տարանջատման անհրաժեշտությանը անդրադառնալիս, մեր համոզմամբ, անհրաժեշտ է նախ և առաջ արձանագրել, որ քաղաքացիական պատասխանատվությունը՝ որպես հավաքական հասկացություն, ամփոփում է կոնցեպտուալ-գաղափարական տեսանկյունից սերտ փոխկապակցված, սակայն ինստիտուցիոնալ առումով միմյանցից տարբեր ինստիտուտներ, որոնց փոխհարաբերակցության հիմքում ընկած են բովանդակային պատճառներ:

Պայմանագրային և արտապայմանագրային պատասխանատվության բաժանման հիմքում միայն պատմական պատճառներ չէ, որ ընկած են, և հետևաբար՝ ժամանակակից իրավունքի տեսանկյունից դրանք սպառված համարվել չեն կարող: Ավելին, ժամանակի ազդեցությունը միայն կարող է ընդգծել պայմանագրային պատասխանատվության հատուկ դերն ու անջատ կարգավորման կարևորությունը: Նման տեսակետի հիմնավորումը պայմանավորված է պայմանագրային հարաբերությունների բնույթով, քաղաքացիական շրջանառությունում պայմանագրի ունեցած շոշափելի դերով և առաքելությամբ, որոնց վրա իրավունքի զարգացման արդյունքում ձևավորվող նոր մոտեցումները ձակատագրական ազդեցություն չեն կարող ունենալ:

Ուստի անխուսափելիորեն առաջանում է պայմանագրային պատասխանատվության տարբերակված իրավական կարգավորման անհրաժեշտության հիմնավորվածության հարցը: Կամ, այլ կերպ ասած, քաղաքացիական պատասխանատվության կարգավորման ընդհանուր համակարգում որքանո՞վ է արդարացված պայմանագրային պատասխանատվության համար հատուկ կանոնների սահմանման անհրաժեշտությունը, և արդյո՞ք պայմանագրային պատասխանատվության ինքնուրույն իրավական կշիռը բավարար է քաղաքացիական պատասխանատվության միացյալ համակարգում պայմանագրային պատասխանատվության համար իրավակարգավորումների բացառություններ կատարելու համար:

Մեր համոզմամբ, պայմանագրային պատասխանատվության ինքնուրույնությունը բնութագրում են առնվազն հետևյալ հանգամանքները.

➤ Պայմանագրային պատասխանատվությունը, ի տարբերություն արտապայմանագրային պատասխանատվության, ունի կողմերի սուբյեկտիվ հայեցողությանը ենթարկվելու լայն հնարավորություն՝ ի դեմս պարտավոր անձանց շրջանակի, պարտավորության չափի, իրավունքների և պարտավորությունների կառուցվածքի և այլն: Կամքի ինքնավարությունը պայմանագրային հարաբերությունների անքակտելի տարրն է, որը ծանրակշիռ ազդեցություն է ունենում նաև պայմանագրային պատասխանատվության համակարգի վրա:

➤ Պայմանագրային պատասխանատվությունը կարող է ծագել ինչպես օրենքով, այնպես էլ նախատեսված լինել պայմանագրով: Արտապայմանագրային պատասխանատվությունը նախքան իրավահարաբերության ծագումը կողմերի հայեցողության դիտանկյունից բացարձակ անտարբեր է:

➤ Պայմանագրային պատասխանատվության չափը փոփոխական է, այն

¹ St´u Кулагин М. Н., Предпринимательство и право: опыт запада. Избранные труды, М., Изд-во Статут, 1997թ., էջ 286:

դեպքում, երբ դելիկտային պատասխանատվության հարաբերականորեն կայուն է և փոփոխության կարող է ենթարկվել միայն օրենքով նախատեսված հնարավորության պարագայում: Կողմերի կամքը սահմանափակված է օրենքով թույլատրելի սահմանափակումներով:

➤ Պայմանագրային պատասխանատվության տեսակների, դրա ծագման, ինչպես նաև բացառման պայմանների շրջանակը ոչ միշտ է համընկնում արտապայմանագրային պատասխանատվության ընդհանուր տեսակների, հիմքերի և պայմանների հետ: Բացի այդ, նման պայմանների բովանդակությունը և գնահատման չափանիշները պայմանագրային պատասխանատվության դեպքում տարբերվում են:

➤ Պայմանագրի ազատությունը պայմանագրային հարաբերությունների բովանդակությունը կանխորոշող հնարավորություն է, որը ենթադրում է նաև հարաբերությունների ստեղծագործ օրենքով չնախատեսված, միևնույն ժամանակ չարգելվող բովանդակության առկայություն: Այս իրողությունը թելադրում է պատասխանատվության ինստիտուտի թույլատրելի ձևերի, որը չի սահմանափակվում միայն դրա կիրառման կամ չկիրառման ընտրությունը տիտղոսատիրոջ հայեցողությանը թողնելով: Այն առավել քան բովանդակային է և ունակ հարմարվելու կողմերի իրավիճակային մոտեցումներին:

Առնվազն քաղաքացիական պատասխանատվության տեսակների, ծագման և դադարման պայմանների մասով պայմանագրային պատասխանատվությունը թելադրում է «խաղի սեփական կանոնները», որոնք քաղաքացիական պատասխանատվության ընդհանուր համակարգում պայմանավորում են պայմանագրային պատասխանատվության ինքնուրույնությունն ու հարաբերական անկախությունը:

Պայմանագրային պատասխանատվության առանձնահատկությունը պայմանավորված է պայմանագրի յուրահատուկ դերով և նշանակությամբ, նրա՝ միաժամանակ և՛ որպես իրավաբանական փաստի, և՛ կարգավորիչ գործառույթով, պայմանագրային հարաբերություններում կողմերի ակնկալած կանխատեսելիությունն ապահովելու կարողությամբ: Սկզբունքային նշանակություն ունեցող նշված ելակետերը կանխորոշում են այն հիմնական փաստարկները, որոնք ընկած են պայմանագրային պատասխանատվության տարբերակված կարգավորման հիմնավորվածության հիմքում:

Պայմանագրային պատասխանատվության ինքնուրույն կարգավորման առարկայի մասին է վկայում նաև իրավակիրառ պրակտիկան: Պայմանագրային և արտապայմանագրային պատասխանատվության տարանջատման հստակ նորմատիվային հիմքի բացակայությունը ֆրանսիական իրավունքում լրացվել է դատական մեկնաբանություններով: Ֆրանսիայի վճռաբեկ դատարանի գնահատմամբ՝ պայմանագրային հարաբերությունների կողմերի նկատմամբ կիրառելի է *Non Cumul (no accumulation)* սկզբունքը¹, համաձայն որի՝ պարտատերը իրավունք չունի պարտապանի նկատմամբ պատասխանատվության պահանջ ներկայացնելիս վկայակոչել արտապայմանագրային իրավունքի նորմերը: *Non Cumul* սկզբունքի հիմնավորումը պայմանագրի կողմերի համաձայնությունը, մասնավորապես՝ այն ռիսկերը չխաթարելու անհրաժեշտությունն է, որոնք պարտապանը համաձայնել է կրել իր պայմանագրային պարտավորությունները կատարելիս²:

Նշվածին հարկ է հավելել նաև, որ պայմանագրային հարաբերություններում, այդ թվում պայմանագրային պատասխանատվության շրջանակներում կանխատեսելիության և ռիսկերի կառավարման կարիք զգում են ոչ միայն պարտապանը,

¹ St^eu Cour de Cassation, Chambre commerciale, du 9 juillet 2002, 99-19.156, Publié au bulletin:

² St^eu P. Brun, Responsabilité civile extracontractuelle, 3rd edn., Paris, LexisNexis, 2014թ., էջ 106:

այլև պարտատերը, և շատ դեպքերում պարտատիրոջ ռիսկերի կառավարման հնարավորությունը ուղղակի կախված է պարտապանի վարքագծից, հետևաբար նաև՝ պայմանագրային պատասխանատվության օրենսդրական և պայմանագրային կարգավորումներից:

Հարկ է նաև նկատել, որ թեև նշված սկզբունքը գործնականում առաջացնում է մի շարք խնդիրներ՝ կապված տարբեր փաստական հանգամանքների նկատմամբ նշված սկզբունքի բացարձակ կիրառման հետ, այդուհանդերձ սկզբունքի նշանակությունը ֆրանսիական իրավունքի տեսությունը չի գերազանահատում, քանի որ այն իրավակիրառ պրակտիկայի համար ունի հստակ կողմնորոշիչ նշանակություն: Ֆրանսիական դատական պրակտիկայի ձևավորած նշված սկզբունքը ուղղակի գործնական անհրաժեշտության արտացոլումն է այն բանի, որ պայմանագրային պատասխանատվության ինստիտուտի տարանջատված կարգավորման անհրաժեշտությունը ոչ թե կամայական տեսական գաղափար կամ պատմության հոսքին մեխանիկորեն հետևելու հետևանք է, այլ օբյեկտիվ իրողություն և գործնական անհրաժեշտության հետ հաշվի նստելու հրամայական: Վերը նշվածը թույլ է տալիս եզրահանգել, որ պայմանագրային հարաբերությունների էությունը և դրանց առանձնահատուկ բնույթը պահանջում են պայմանագրային պատասխանատվության ուրույն կարգավորումներ:

Նշվածը, իր հերթին, ամենևին չի նշանակում, որ պայմանագրային պատասխանատվության ինքնուրույնությունը բացարձակ է: Հանդիսանալով քաղաքացիական պատասխանատվության համակարգի մաս՝ այն սերտորեն առնչվում է քաղաքացիական պատասխանատվության այլ՝ հարակից կարգավորումների հետ: Իրավահարաբերությունների շարունակական բարդացմանը զուգահեռ՝ հաճախ առաջանում է քաղաքացիական պատասխանատվության մի քանի ինստիտուտի միաժամանակյա կամ որ նույնն է՝ համակցված կիրառման անհրաժեշտություն: Դժվար է չհամաձայնվել, որ հասարակական հարաբերությունների և հատկապես գործարարական գործունեության փոխակապակցված մեխանիզմների գործողության պայմաններում միանշանակ սահմանազատում անցկացնելը իրատեսական և արդյունավետ չէ: Պայմանագրային պատասխանատվության ինքնուրույն կարգավորումները անշուշտ պետք է գործեն ընդհանուր՝ պայմանագրային և արտապայմանագրային պատասխանատվության նկատմամբ կիրառելի ընդհանուր դրույթների ներքո, որոնք պետք է կրեն պայմանագրային և արտապայմանագրային պատասխանատվության կարգավորումների սահմանազատման, դրանց հավասարակշռման, հարկ եղած դեպքում՝ դրանց զուգահեռ կիրառման և միմյանց կարգավորման առարկա «ներխուժելու» դեպքերի սահմանման օրենսդրական բեռը:

Նշվածը, սակայն, չպետք է նաև հիմք հանդիսանա պայմանագրային պատասխանատվության դերն ու նշանակությունը թերազնահատելու կամ դրա տեսանելի և հստակ կարգավորման կարիքը մեկ միասնական քաղաքացիական պատասխանատվության գաղափարի (որը փաստացի արտապայմանագրային պատասխանատվությունն է) անվան տակ քողարկելու համար:

Վերոգրյալի ամփոփ եզրակացությամբ կարող ենք փաստել, որ քաղաքացիական պատասխանատվության ընդհանուր համակարգում պայմանագրային պատասխանատվությունը ունի ինքնուրույն առաքելություն, ինչը պայմանավորված է պայմանագրային պատասխանատվությանը հատուկ աքսիոմատիկ հատկանիշների գոյությամբ: Պայմանագրային պատասխանատվության հարաբերական անկախությունը հիմնավորվում է պայմանագրի ազատության, կողմերի կամքի ինքնավարության միջոցով ռիսկերի հավասարակշռման նպատակով փոխադարձ կանխատեսելի ակնկալիքներ ունենալու բնական անհրաժեշտությամբ, որոնք արտացոլվում են պայմանագրային պատասխանատվության տեսանկյանի, ծագման ու բացառման պայմանների տարբերակված բովանդակության մեջ:

Անհրաժեշտ է ընդգծել նաև, որ պայմանագրային պատասխանատվության՝ որպես հարաբերականորեն անջատ իրավական ինստիտուտի և ինքնուրույնության ճանաչումն ունի ոչ միայն տեսական, այլև գործնական կարևոր նշանակություն, ինչը ենթադրում է բավարար օրենսդրական ուշադրություն և իրավական հստակ կարգավորումների առկայություն:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում¹ (այսուհետ նաև՝ Օրենսգրք) պայմանագրային պատասխանատվության ինստիտուտը չի ենթարկվել արժանի իրավական կարգավորման: Պայմանագրային պատասխանատվության հարաբերությունները կանոնակարգող ընդհանուր դրույթները տեղ են գտել Օրենսգրքի՝ «Պատասխանատվությունը պարտավորությունները խախտելու համար» վերտառությամբ 26-րդ գլխում, որը, մինչև նույն ժամանակ, ունի կարգավորման առավել ընդգրկուն շրջանակ և պարունակում է նորմեր, որոնք վերաբերում են ինչպես պայմանագրերից ծագող պարտավորությունների չկատարման համար վրա հասնող պատասխանատվությանը, այնպես էլ արտապայմանագրային պատասխանատվությանը: Եվ թեև ընդհանուր բնույթի կանոնակարգում ենթադրող գլխով սահմանվում են նաև իրենց բովանդակությամբ միայն պայմանագրային պատասխանատվությանը վերաբերող կանոններ, այդուհանդերձ նախ՝ դրանց պայմանագրային պատասխանատվության նկատմամբ կիրառելի լինելու մասին կարելի է ենթադրել միայն կոնկրետ նորմերի բովանդակությունից, որի բացահայտումն իր հերթին գնահատողական գործընթաց է: Պոզիտիվ տեսանկյունից դրանց կիրառումը սահմանափակված չէ միայն պայմանագրային պատասխանատվության շրջանակներով, իսկ իրավակիրառի հայեցողությունը նման իրավիճակում ավելորդ է:

Եվ հետո, դրանց զուգահեռ առկա են նաև արտապայմանագրային պատասխանատվության նկատմամբ կիրառելի նորմեր, որոնք համարժեք չեն պայմանագրային հարաբերությունների էությանը և բովանդակությանը:

Ի տարբերություն պայմանագրային պատասխանատվության՝ արտապայմանագրային պատասխանատվությունը, ընդհանուր կարգավորումներից բացի, կանոնակարգված է նաև հատուկ՝ միայն արտապայմանագրային պատասխանատվությանը վերաբերելի 60-րդ և 61-րդ գլուխներով:

Հայրենական իրավական համակարգում Ֆրանսիայի դատական պրակտիկայի օրինակով, սակայն առավել անուղղակի ձևով պայմանագրային պատասխանատվության կարգավորումների անհրաժեշտությունը փաստել է ՀՀ Վճռաբեկ դատարանը՝ դիրքորոշում հայտնելով այն մասին, որ «(...)այն դեպքում, երբ պայմանագրային հարաբերությունների առկայության պայմաններում վնասի հատուցումը կարգավորված չէ պայմանագրի դրույթներով և պայմանագրերի տվյալ տեսակին վերաբերող քաղաքացիական օրենսդրությամբ, դրա նկատմամբ կիրառելի են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1058-րդ հոդվածը(...)»²:

Վճռաբեկ դատարանի կողմից արտապայմանագրային պատասխանատվության կարգավորումների կիրառումը պայմանագրային պատասխանատվության նկատմամբ նման հիմնավորմամբ (թեև միայն պատասխանատվության ծագման պայմանների մասով) ինքնին վկայում է պայմանագրային պատասխանատվության օրենսդրական կարգավորումների անհրաժեշտության մասին:

Այսպիսով, գտնում ենք, որ քաղաքացիական պատասխանատվության ընդհանուր համակարգում պայմանագրային պատասխանատվության ինստիտուտն

¹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքը, ՀՀՊՏ 1998.08.10/17(50): Ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 05 մայիսի 1998թ., ուժի մեջ է մտել 01 հունվարի 1999թ.:

² Տե՛ս Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի՝ թիվ ԵԱՆԴ/2914/02/17 քաղաքացիական գործով 2022թ. մայիսի 20-ի որոշումը:

օժտված է հարաբերական ինքնուրույնությամբ, իսկ դրա ճանաչումը և օրենսդրական համարժեք իրավակարգավորումների նախատեսումը կնպաստեն ինչպես օրենսդրական որոշակիությանը, այնպես էլ իրավակիրառ պրակտիկայի միասնականության ապահովմանը և դրա հետագա զարգացմանը:

ПРОБЛЕМА СООТНОШЕНИЯ ДОГОВОРНОЙ И ВНЕДОГОВОРНОЙ ОТВЕТСТВЕННОСТИ В ГРАЖДАНСКОМ ПРАВЕ¹

Այկ Բաղասարյան

Аспирант кафедры гражданского права ЕГУ

Статья посвящена соотношению договорной и внедоговорной ответственности. В статье рассматриваются теории договорной и внедоговорной ответственности, особенности, присущие договорной ответственности, основные принципиальные направления, лежащие в основе их дифференциации, необходимость теоретического и практического разделения.

В статье анализируется соотношение договорной и внедоговорной ответственности в системе гражданской ответственности, объективные причины необходимости специальных регулирований договорной ответственности, подчеркивается важность адекватных регулирований в гражданском обороте. Затрагивается также действующее законодательство, толкование судебной практики, структурные недостатки существующих регулирований института гражданской ответственности, влияние на регулирование договорной и внедоговорной ответственности и их толкование.

Делается вывод о том, что договорная ответственность в общей системе гражданской ответственности должна содержать специальные регулирования. Такое разделение обуславливается уникальной ролью и значением договора в гражданском обороте, его одновременно и как юридического факта, и регулирующей функцией, способностью обеспечить ожидаемую сторонами предсказуемость в договорных отношениях, уравновесить риски.

В результате была предпринята попытка обосновать относительную независимость договорной ответственности в системе гражданской ответственности, необходимость специальных законодательных регулирований для обеспечения правовой определенности, единства правоприменительной практики и ее дальнейшего развития.

¹ Статья было представлена 8 декабря 2022г. на научной конференции аспирантов и соискателей юридического факультета Ереванского государственного университета.

THE PROBLEM OF THE CORRELATION BETWEEN CONTRACTUAL AND EXTRA-CONTRACTUAL LIABILITY IN CIVIL LAW¹

Hayk Baghdasaryan

Ph.D. student at the YSU Chair of Civil Law

The correlation between contractual and extra-contractual liability is the focus of the article. The article addresses the concepts of contractual and extra-contractual liability, the features inherent in contractual liability, the main principal directions underlying their differentiation, the necessity for theoretical and practical separation.

The article analyzes the interrelationship of contractual and extracontractual liability under the system of civil liability, the objective reasons for the need for specific regulations of contractual liability, highlights the importance of appropriate regulations in civil turnover. The current legislation, interpretation of judicial practice, structural flaws of the existing regulations of the institution of civil liability, the impact on the regulation of contractual and extracontractual liability and their interpretation are also touched upon.

It is concluded that special rules should apply to contractual liability under the general civil liability system. This division results from the contract's special function and significance in civil turnover and is necessary to guarantee the predictability that the parties to a contract anticipate and to balance the risks.

As a result, an attempt was made to justify the relative autonomy of contractual liability within the framework of civil liability, as well as the necessity of particular legislative rules to protect legal certainty, the coherence of legal practice, and its further advancement.

Բանալի բառեր - Պայմանագրային պատասխանատվություն, արտապայմանագրային պատասխանատվություն, պատասխանատվության տեսակներ, պայմանագիր, կամքի ինքնավարություն, պատասխանատվության պայմաններ, մեղք, կանխատեսելիություն:

Ключевые слова: Договорная ответственность, внедоговорная ответственность, виды ответственности, договор, автономия воли, условия ответственности, вина, предсказуемость.

Key words: Contractual liability, extra-contractual liability, types of liability, contract, autonomy of will, conditions of liability, fault, predictability.

¹ This article was reported in 2022 December 8 at the scientific session of graduate students and applicants at the YSU Faculty of Law.